

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՎՐԴ. ԽԱՐԲԵՐԴՑԻ
(1580 ? - 1641 ?)

Մասնաւ է Խարբերդի եղեղի գիւղը ԺԶ. Դարու վերջին քառորդին մօտաւորապէս: Դրգին էր Կիրակոս քահանացի և Հայփամիմէի: Աշակերտած է Շէնքուչցի Մարտիրոս Վարդապէտի, որմէ զաւազոնի իշխանութիւն ստացած է 1618ին:

Կը թուի թէ իր սիրակոն ասպարէզը եղած է Քարոզչութիւնը, յատկապէս նիւթ ունենալով եսայի Մարգարէի գիրքը, որուն վրայ զաստիսած և քարոզած է երկար տարիներ, ինչպէս կը տեղեկացնէ Մասպատկի մասին զրոծ ոտանուորին տառջին տաւներով:

Ան կ. Պոլիս գացած է 1628ին, ըստ վկայութեան Յակոբ գրչի. «Ի թվականութեան հայկագետն առաջարիս Ռէջ . . . ոմն յերկրէն Հարբերդու, անուանեալ Արիստազէս վարդապէտ, աւաեալ և հմուտ եղեալ Հին և Նոր Կատարանաց, իջեալ ի կոստանդնուպօլիս, վասն բանի Սր. Ա-

ւետարանին, զի քարոզեացէ յաւնկն հաւատացելոց»: - Յիշտակարանք ԺԵ. Դարբի, Բ. Հատոր, էջ 288, թիւ 437:

Կ. Պոլսոյ մէջ իր կատարած գործերէն գովեստով յիշուած է Պալտիու Ս. Հրեշտակապէտ Եկեղեցիին նորագման առթիւ իր բերած բարոյակոն մեծ օժանդակութիւնը: Ահաւասիկ հակիրճ վկայութիւն մը: Արիստակէս վրդ. Խարբերդցի «քազում աշխատանու կրեաց թուին Հայոց Ռէջին, վերսախն նորագելով և զարդարելով զՊալտիու դրան Սր. Հրեշտակապէտ Եկեղեցին, դոս և քարոզ տաելով, և զժողագուրդոն յորդարմամբ ժաղովք անելով, հազիւ ազատեաց զեկեղեցին ի պարտաւցն»: - Ցաւցու Ձեռ. Ս. Յակոբիանց, Թ. Հատոր, էջ 141: Ձեռ. Ս. Յ. Թիւ 2944, Այդ մասին ընդարձակօրէն գրած է Գրիգոր Դարանազեցին իր ժամանակագրութեան մէջ (էջ 187 - 189):

Արիստակէս վրդ. ջանք տարած է նաև գիրքներ ստանալու, ինչպէս կը տեղեկանանք իր կամ ուրիշներու կողմէ գրուած հետեւու յիշտակարաններէն:

Երբ, մի քանի տարի տառջ, Հռոմ էր գնացել իր եպիսկոպոսի հետ, որը հիմա Լուովում է Թաղուած, վերջինու այնտեղ Ս. Պատարագ էր մատուցել հայկական ծէռով³⁶, Հերթաւոտի այս վկայութիւնը յիշտակում է նուև Պետրովիչը՝ մի ուրիշ կապակցութեամբ եւ իրաւոմք գտնում, որ ակնարկուած հայիսկոպոսը հենց Սալմատացին է³⁷, բայց հաշուի չի առնում, որ ամի քանի տարին տաելով կարելի է հասկանալ 2-3 տարի, կամ 3-4 տարի, կամ էլ շատ-շատ՝ 5-6 տարի, բայց ոչ 16 տարի, ինչպէս լոելեայն համարում է ինքը՝ Պետրովիչը, որպէսզի կարողանայ տանել-կապել 1550 թուականի հետ: Եւ սրանով մենք ժամանակակից Հերբերտի վկայութեամբ տեղեկութիւն ենք ստանում այն մասին, որ Սալմատացին մահացել է 1560-ական թուականների սկզբի տարիներին եւ թաղուալ է Լուովում: Բացի այդ՝ Հերբերտի ամի քանի տարի տառջ խօսքը միաժամանակ վկայութիւնն է այն ուղեւորութեան, որ Սալմատացին պիտի կատարած լինէր Լուովից գէպի Հռոմ, որպէսզի պապից յանձնարարագիր ստանար՝ Ֆերդինանդ կայսրին ներկայանալու հաւար:

Այժմ վերյիշենք, որ, ժամանակին, որոշ ազգիւրներում Սալմատացը մտնուան որպէս տարեթիւ ցոյց տրուած 1551 եւ 1552 թուականների մասին խօսելիս, գրել էինք. «Մի շարք փաստեր մեզ ասում են, թէ յիշեալ բոււկաններին Սալմատաց Սալմատեցին չէր մահացել Լուովում եւ չէր թաղուել այնտեղ»³⁸: Այդ հին հաւատմանն են վերաբերում վերեւում մեր ներկայացրած փաստերն ու փաստարկները:

(Մնացեալի լազուրիլ)

Յ. Ս. ԱնԱԱԱԱԱ

36 B. Herbest, «Wypisanie drogi», MLUR, vol. 5, str. 4-8.

37 PChA p. 148.

38 Եջմիածին, 1956, № 11-12, էջ 76:

1. — «Սատացայ զսուրբ գիրքս [Տօնապատճառ] և ետու վերստին նորոգել և կողմիւ ի թվին Հայոց մհծաց ՌՀԴ՝ (1624)».
— Յիշտ. Ժի. Դարի, Բ., էջ 124. — Զեռ. Երևանի, թիւ 2039.

2. — «Ես . . . Արիստակէս լոկ վարդապետ յարջորջեալ, ցանկացաւզ եղէ Աստուծածունչ սուրբ գրոցս և ելի ի խնդիր սմին մհծաւ փափաքանաւք, մինչ զի հինգ և վեց ամ ի պանդըխառաթեան չըջեցայ վասն սորտ, միթէ լիցի զի հասից փափաքանաց իմոց: Ապա . . . յարժամ զնացաք ի Տիգրանակերտ, կամաւեքն Աստուծոյ պատահեաց մեզ Աստուծածունչ սուրբ գիրքս մհծագին և բազմածախս: Սատացայ զսու ի վայելունն անձին իմոյ և առաջնորդ հոգւոյս իմոյ» [1624]. — Յիշտ. Ժի. Դարի, Բ., էջ 134–5. Զեռ. Երևանի, թիւ 180 (թիւ 1295):

3. — «Ես Արիստակէս վարդապետ հառ զրել զՍաղմասի Մեկնիչս [Ն. Լամբրոնացոյ] և եղի յիշատակ ինձ և ծնօղաց իմոց, ի Հարբերդ մհծանաչակ ուխան ի Ս. Աստուծածինն, ի վանքն Դատիմայ» [1628]. — Յիշտ. Ժի. Դարի, Բ., թիւ 437, Զեռ. Երևանի, թիւ 1017:

4. — «Ի թվականութեան հայկազեան տուժմարիս ՌՀՁԹ (1630) . . . ովն յերկրէն Խարբերթու, անոււանեալ Արիստակէս վարդապետ, ուսեալ և հմուտ եղեալ Հին և Նոր կատարանաց, եկեալ ի մայրաքաղաք Հայապ վասն Երուսաղէմ զնալոյ, և ժամանակ ինչ աստ կեցեալ քարոզէր զրանն Սր. Աւետարանի ի լսելիս հաւատացելոց: Եւ . . . ետ գրել ինձ Աստուծածուոր սարկաւագիս զսուրբ Պատմագիրքս և զիսւծմունս» (= Ժողովածու). — Յիշտ. Ժի. Դարի, Բ., էջ 375. Զեռ. Երևանի, թիւ 2619:

5. — «Ես Արիստակէս վարդապետ Խարբերդցի ի վաղուց հետէ հռափափաք սիրով տենչայի դտանել զԵրկուտասան Մարգարէից Մեկնութիւնն, զոր արարեալ է եռամմեծին սրբոյն վարդանայ Վարդապետին: Արդ . . . ստացա . . . և ետու վերստին նորոգել և կազմել զաս Աերաստացի մահապատի Մելքոն Դպրի և քարտադարի . . . ի թվին Հայոց ՌՀՁԲ . . . » —

Յիշտ. Ժի. Դարի, Բ., էջ 500. Զեռ. Երևանի, թիւ 1269:

6. — Սատացած է 1641ին, Մեկնութիւն Գործոց Առաքելոց, Գէորգ Սկեռացիի: Գրիչ Խաչատուր Երէց, ի Կ. Պոլիս. — Զեռ. Երևանի, թիւ 1365:

Խարբերդցին գրած է սատանաւորներ աւ. ծանօթ են հասեեալուները:

1. — Ոտանաւոր տասցեալ Արիստակէս Վարդապետի. — 1624 — Եկոյք եղբայրք ամենեքեան, պատմեմ ձեզ բան յոյժ ողբական . . . — Յիշտ. Ժի. Դարի, Բ., էջ 125–128:

2. — Ոտանաւոր և ներբողեան վասն օրհնեալ Քաղաքին Եղեսիոյ. — Զեռ. Երևանի, թիւ 1771, էջ 327բ–330բ. — Յամմիկ Սահակեան, Ուշ Միջնադարի Հայ Բանաստեղծութիւնը, 1975, Երևան, էջ 61:

3. — Ոտանաւոր վասն Մոազատկին:
Արիստակէս խնդրող բանի,
ոտանաւոր չարագրեցի,
վասն ծռազատկի յունի,
որ եղեւ մեր ժամանակի,
որ ըստ հայկազան տուժմարին,
հազար ւութսուն ւերիք թվին . . .

[= 1634]

Զեռ. Ս. Յ. թիւ 205, թիւ 1667: Յաւցակ Զեռ. Ս. Յակոբեանց, Ա., էջ 575. Նոյնը կը գտնուի նաև Ս. Յ. թիւ 1456 ձեռագրին մէջ, ընդամէնը 115 տուն, որոնցմէ ընտրովի առնուած 13 տուներ կարելի է տեսնել Ս. Յակոբեանց Զեռ. Հուցակի Ե. Հատորին մէջ (էջ 153):

Ասոնցմէ զատ Երևանի Մատինադարանին թիւ 3680 Ժողովածուին մէջ կայ զրուածք մը սա խորագրսվ. «Հարցմունք Թօխաթենցի Պաղտասարի և Պատասխանիք Արիստակիսի Խարբերդցաւոյ»:

Արիստակէս Վարդ. Խարբերդցին ուրիշ համանուն վարդապետներու հետ չփոթուած է յաճախ, և սիսալմամբ իրն վերաբրուած են գրական այլեւայլ գործեր եւս: Նման չփոթութիւններ յաճախսագէպ են արգարի մեր միջնադարեան գրողներուն պարագային, և կը ներկայացնին բանասիրական կնճռուտ հարցերու կարկառուն դէզ մը:

Ն. Արթ. ՄՈՎԱԿԱՆ